ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

25 դեկտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Գրիգոր Կարապետյանը, Էմմա Գասպարյանը և Շուշանիկ Հակոբյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էր՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սերյոժա Սարդարյանը, Արայիկ Քոչարյանը, Արմենուհի Ոսկանյանը և Պավլիկ Պապինյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Թիանա Բոջուկյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 10 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13:10-ին նիստը հայտարարեց բացված:

Համայնքի ղեկավարն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի 6-րդ կետում «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծում կատարել լրացում՝ 11 լոտ աճուրդի ներկայացված հողակտորներին ավելացնել ևս 3-ը և վարձակալության ներկայացված 5 լոտ հողակտորներին ավելացնել ևս 2-ը, ինչպես նաև օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 18-20-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

18. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

19. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

20. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը խոտանելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

Քվեարկությամբ, կողմ՝ 10 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Քվեարկությամբ, կողմ՝ 10 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 142-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ՝համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. «Արմենիա Թրի Փրոջեքթ» («Էյ Թի Փի») հասարակական բարեգործական կազմակերպությանը անշարժ գույքի հարկի գծով արտոնություն տրամադրելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Ղազար Տելեմակի Եղիազարյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

15. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2024թ-ի IV եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

16. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

18. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

19. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

20. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը խոտանելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է 2025 թվականի համար համայնքում սահմանել տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի /20 կետով/ և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի /18 կետով/:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 143-Ն/:

2. ԼՍԵՑԻՆ - 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը առաջարկում է սահմանել 2025 թվականի համար Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի /5 կետով/:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 144-Ն/:

3. ԼՍԵՑԻՆ - «Արմենիա Թրի Փրոջեքթ» («Էյ Թի Փի») հասարակական բարեգործական կազմակերպությանը անշարժ գույքի հարկի գծով արտոնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Լոռու մարզպետի 06.12.2024թ-ի N 01/111,1/10033-2024 գրությունը, առաջարկում է «ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» («ԷՅ ԹԻ ՓԻ») բարեգործական հիմնադրամին համայնքի տարածքում անհատույց տրված հողամասերի համար անշարժ գույքի հարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով հաշվարկված անշարժ գույքի հարկից՝ 409517 (չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի չափով և դրա նկատմամբ հաշվարկած տույժերից՝ 83729 (ութսուներեք հազար յոթ հարյուր քսանինը) ՀՀ

դրամի չափով, ընդամենը՝ 493246 (չորս հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 145-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Ղազար Տելեմակի Եղիազարյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Ղազար Տելեմակի Եղիազարյանի դիմումը, առաջարկում է տալ համաձայնություն նրա կողմից վարձակալած Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-041-0203-0091 կադաստրային ծածկագրով 0,12 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով 135300 (մեկ հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ կադաստրային արժեքով նրան օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 146-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը առաջարկեց ներկայացված նախագծում կատարել լրացում՝ 11 լոտ աճուրդի ներկայացված հողակտորներին ավելացնել ևս 3-ը և վարձակալության ներկայացված 5 լոտ հողակտորներին ավելացնել ևս 2 լոտ: Այսպիսով նախագծով աճուրդի է ներկայացվում 14 լոտ հողամաս, վարձակալությամբ հատկացվում է 7 լոտ հողամաս, իսկ կառուցապատման իրավունքով տրամադրվում է 1 լոտ հողամաս:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 147-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը, առաջարկում է համայնքային սեփականության հանդիսացող Քարաբերդ գյուղի 06-108-0105-0009 կադաստրային ծածկագրով 4,0369 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտավայրը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության փոխադրելուն: Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, առանց մրցույթի, մինչև 23.03.2049թ-ը վարձակալության իրավունքով այն տրամադրել «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին: Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 808000 /ութ հարյուր ութ հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 148-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը, առաջարկում է տալ համաձայնություն Քարաբերդ գյուղի 06-108-0111-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 4,1356 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 23.03.2049թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն: Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 827000 /ութ հարյուր քսանյոթ հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 149-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը, առաջարկում է տալ համաձայնություն Քարաբերդ գյուղի 06-108-0105-0005 կադաստրային ծածկագրում գտնվող 3,7879 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 23.03.2049թ-ը առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն: Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 757000 /յոթ հարյուր հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 150-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը, առաջարկում է տալ համաձայնություն Քարաբերդ գյուղի 06-108-0105-0010 կադաստրային ծածկագրում գտնվող 2,82277 հա

արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 23.03.2049թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն: Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 566000 /հինգ հարյուր վաթսունվեց հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 151-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, առաջարկում է համայնքային սեփականության հանդիսացող 06-108-0615-0002 կադաստրային ծածկագրով 1,56192 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտավայր գործառնական նշանակության հողամասը նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 152-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը նշեց, որ հաշվի առնելով Նունե Սամվելի Սարդարյանի դիմումը, վարձակալության իրավունքի վկայականները, առաջարկում է տալ համաձայնություն նրան վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրի 06-010-0112-0010 կադաստրային ծածկագրով 1,56044 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի հնդավոր հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 4673520 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ:

Տալ համաձայնություն նաև Նունե Սամվելի Սարդարյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրի 06-010-0113-0038 կադաստրային ծածկագրով 2,2 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահողը ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 2480500 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 153-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը նշեց, որ հաշվի առնելով «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի գրությունը, առաջարկում է ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնք Վահագնաձոր գյուղի 3-րդ փողոց 9 մանկապարտեզ հասցեում գտնվող 06-102-0015-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 154-Ա/:

13. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը նշեց, որ 2024 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում Փամբակ համայնքի բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել 1600000 ՀՀ դրամի հիմնական միջոց /խոզանակ սարքավորում և գութան/:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 155-Ա/:

14. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2024թ-ի IV եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը նշեց, որ Փամբակ համայնքի բյուջեից 2024թ-ի IV եռամսյակում համայնքի սոցիալապես անապահով թվով 7 ընտանիքի հատկացվել է 300000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության /դրամական օգնության/:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 156-Ա/:

15. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեն
1) եկամուտների գծով կազմում է 743179100 /յոթ հարյուր քառասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,
2) Ծախսերի գծով կազմում է 743179100 /յոթ հարյուր քառասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,
Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի նախագծի կազմման ժամանակահատվածում բյուջեի դեֆիցիտ (պակասուրդ) կամ հավելուրդ չի առաջացել:
<u>Համայնքի բյուջեի եկամուտներ</u>
Հարկային եկամուտների ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2024 թվականի հաշվարկային ցուցանիշները, քանի որ դեռևս 2025թ-ի հաշվարկային ցուցանիշներ չունենք: Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային մասը կազմում է 743179,1 հազար դրամ, որից հարկեր և տուրքեր՝ 103685,0 հազ. դրամ, պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա/ 599720,1 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 39774,0 հազ. դրամ, որից՝ գույքի վարձակալություն՝ 10774,0 հազ. դրամ, վարչական գանձումներ՝ 19000,0 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 10000.0 հազ. դրամ:

Ընդամենը եկամուտներ 743179,1 հազար դրամ
այդ թվում՝
- Վարչական բյուջեի մասով 743179,1 հազար դրամ

- Ֆոնդային բյուջեի մասով 133098,7 հազար դրամ /Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում/

Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը կազմում է.

Ընդամենը ծախսեր 743179,1 հազար դրամ

այդ թվում

- Վարչական բյուջեի մասով 743179,1 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 133098,7 հազար դրամ

Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Ընացիկ՝ վարչական ծախսերը կազմում է 743179,1 հազար դրամ.

Աշխատողների, աշխատավարձեր և հավելավճարներ հաղվածով նախատեսվել է 241447.1 հազար դրամ: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել է 78986.0 հազ. դրամ: Դրամաշնորհ Փամբակ համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ներին՝ 268543.3 հազ. դրամ: Սոցիալական նպաստներ համայնքի անապահով ընտանիքներին՝ 6000.0 հազ. դրամ: Այլ ծախսեր՝ 148202.7 հազ. դրամ, որի մեջ մտնում է նաև պահուստային ֆոնդը՝ 142942.7 հազ. դրամ, որը հետագայում կօգտագործվի ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և բյուջեով չնախատեսված ծախսերի համար:

2. Կապիտալ՝ ֆոնդային ծախսերը կազմում է 168098.7 հազ. դրամ.

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումով նախատեսվել է 58481.0 հազար դրամ, շենքերի և շինությունների շինարարության համար նախատեսվել է 107557.7 հազ. դրամ, այլ հիմնական միջոցներ՝ 60.0 հազ. դրամ, մեքենաներ և սարքավորումներ՝ 2000.0 հազ. դրամ: Տարբերություն 35000.0 հազ. դրամը նախատեսված է հողի օտարումից որպես մուտք, այդ պատճառով էլ ընդամենը ֆոնդային ծախսերում թվային չի արտացոլվում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 157-Ն/:

16. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024թ-ի բյուջեում նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. Եկամտային մասի այլ դոտացիաներ տողում ավելացնել 156978 ՀՀ դրամ, որը ծախսային բաժնում նախատեսել 4.2.1՝ գյուղատնտեսության նախահաշվի 4111 հոդվածում՝ որպես գարնանացանի մոնիթորինգի փոխհատուցման գումար: 5995687 ՀՀ դրամ ավելացնել

օրենքով և այլ իրավական ակտերով 285000 տողում, որը ծախսային բաժնում նախատեսել 9.1.1՝ նախադպրոցական կրթություն նախահաշվի 4637 հոդվածում՝ որպես դրամաշնորհ զին. ծառայողների երեխաների ծախսերի փոխհատուցման վճար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 158-Ն/:

17. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «ԱՆՏԱՌ ՌԵԶՈՐԹ» ՍՊԸ-ի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, առաջարկում է «ԱՆՏԱՌ ՌԵԶՈՐԹ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0336-0051 ծածկագրով 4.67093 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքից 0,58495 հա հողամասը՝ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով փոխադրել ջրային նպատակային նշանակության, ջրային հողերի գործառնական նշանակության:

2. «ԱՆՏԱՌ ՌԵԶՈՐԹ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0336-0051 ծածկագրով 4.67093 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասից 0,89065 հա հողամասը անասնապահությամբ և թռչնաբուծությամբ զբաղվելու նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 159-Ա/:

18. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը խոտանելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով «Մար Մոս» ՍՊԸ-ի կողմից 20.12.2024թ-ին տրված «Գույքի շուկայական արժեքի վերաբերյալ եզրակացությունը» այն մասին, որ նշված գույքերը հետագա շահագործման պիտանի չեն, ենթակա են ուտիլիզացիայի և որ

վերանորոգման ծախսերը մասամբ հնարավոր չեն, մասամբ՝ անիմաստ, քանի որ շուկայում առկա նմանատիպ գույքերի արժեքները ավելի ցածր են, քան վերանորոգման համար պահանջվող ծախսերը, առաջարկում է տալ համաձայնություն Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ գույքերը հետագա շահագործման ոչ պիտանի լինելու պատճառով խոտանելուն:

1) Ջերմատաքացուցիչ - Փամբակ համայնք
2) Կուլտիվատոր - Դեբետ բնակավայր
3) Կուլտիվատոր - Արջուտ բնակավայր
4) Կցասայլակ - Արջուտ բնակավայր
5) Գյուղատնտեսական խոտհավաքիչ - Մարգահովիտ բնակավայր

Վերը նշված գույքերը ենթակա են ուտիլիզացիայի:

Համայնքի ղեկավարին՝ ուտիլիզացիայից ստացված սև մետաղը /1 կգ-ը 45 դրամ ներկայիս շուկայական արժեքով/, որպես ջարդոն վաճառելուց հետո վերոնշյալ գույքերը հանել համայնքի հաշվեկշռից:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 160-Ա/:

19. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի փետրվարի 13-ին: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում */կցվում է որոշում N 161-Ա/:*

Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի փետրվարի 13-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ